600.0271.12.08.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2020 թվականի №271Ա
ք.Երևան

«ԱՐՏՍՈԼԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 21-ի №309Ա որոշմամբ «ԱՐՏՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Արտսոլար» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0654 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի դեկտեմբերի 22-ը Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած, դրական փորձագիտական եզրակացություններով՝Կայանի կառուցման նախագիծը, ինչը, սակայն, չի կատարվել, որի հետևանքով նշված ժամկետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի ապրիլի 22-ը,

բ) Ընկերությունը 2020 թվականի ապրիլի 20-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը 2020 թվականի հուլիսի 1-ի №ՄՄ/34.3-Մ2-12/2563-20 գրությամբ ներկայացրել է իր դիտարկումները՝ մասնավորապես նշելով, որ՝

- Նախագծային փաստաթղթերում առկա «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի մարտի 24-ին տրված №ՏՊ-541-110/0382 բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ Ընկերության կողմից կառուցվելու են 110/10կՎ և 10/0.4կՎ լարման ենթակայաններ՝ համապատասխանաբար 110կՎ և 10 կՎ լարման օդային գծերով, սակայն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության 2020 թվականի փետրվարի 28-ի №5/32/1629 գրության մեջ նշված է, որ կառուցվելու է 10/0.8կՎ լարման ենթակայան և 10կՎ լարման օդային գիծ, իսկ 110/10կՎ լարման ենթակայանի և 110կՎ լարման օդային գծի վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ,
- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի մարտի 24-ին տրված №ՏՊ-541-110/0382 բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանների համաձայն Ընկերության կողմից կառուցվող 110/10 կՎ լարման ենթակայանը միացվելու է «Արեգունի» 110կՎ օդային գծի 35 խարսխային հենարանին՝ կառուցելով 110կՎ լարման օդային գիծ, սակայն կայանի նախագծային փաստաթղթերում նշված է 10 կՎ լարման օդային գիծ,
- Աշխատանքային նախագծում ներառված չեն 110/10 կվ լարման տրանսֆորմատորային ենթակայանի և 110 կվ լարման օդային գծի նախագծերը, ինչպես նաև 6-րդ թերթում պատկերված կայանի միագծանի սխեմայում նկարագրված չեն նշված տրանսֆորմատորային ենթակայանը և օդային գիծը,

գ) Ընկերությունը 2020 թվականի հուլիսի 8-ի գրությամբ ներկայացրել է պարզաբանումներ՝ մասնավորապես նշելով, որ Կայանի նախագծային փաստաթղթերում առկա բոլոր թերությունները կշտկվեն և հնարավորինս սեղմ ժամկետում կներկայացվեն Հանձնաժողով, ինչպես նաև հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության 2020 թվականի մայիսի 27-ի №2/32/5961 գրության համաձայն կառուցվող 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծերը՝ անկախ երկարությունից, ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, և Ընկերությունը արդեն իսկ նախաձեռնել է այն, որի եզրակացությունը պատրաստ լինելուն պես կներկայացվի Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, սույն թվականի հուլիսի 17-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ

կետի 2-րդ ենթակետի համաձայն Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով,

ե) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի հուլիսի 21-ի գրությամբ հայտնել է, որ տեխնիկական պայմաններում տեղ են գտել անճշտություններ, մասնավորապես, նախատեսվում է ոչ թե 110/10 կՎ լարման օդային գծի կառուցում, այլ միացում ներանցման միջոցով և ներկայացրել տեխնիկական պայմանների շտկված տարբերակը: Միևնույն ժամանակ տեղեկացրել է, որ շտկված տեխնիկական պայմանները ներկայացվել են՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ոչ անհրաժեշտ լինելը հաստատելու նպատակով, ինչին ի պատասխան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը 2020 թվականի №2/32.1/8272 գրությամբ տեղեկացրել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունները թվարկված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածում,

զ) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

է) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը՝

դրական փորձագիտական եզրակացություններով, Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ը) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը ԼԷ №0654 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի ապրիլի 22-ը, Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը: Մասնավորապես, փաստվել է, որ՝

- Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված Կայանի կառուցման նախագծային փաստաթղթերը չեն պարունակում 110կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի և 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծի վերաբերյալ տեղեկություններ, այն պարագայում, երբ Ընկերությանը տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն՝ դրանք ենթակա են կառուցման,
- իրավասու պետական մարմնի դիրքորոշման համաձայն՝ 110կՎ և ավելի լարման էլեկտրահաղորդման գծի պարագայում համապատասխան նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, ինչի վերաբերյալ Ընկերության կողմից համապատասխան փաստաթուղթ չի ներկայացվել: Ինչ վերաբերում է 110կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանը 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծին ներանցումով միացնելու վերաբերյալ Ընկերության փաստարկին, ապա, Հանձնաժողովի գնահատմամբ, նշված ներանցումը ևս ենթադրում է 110կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցում, հետևաբար նաև պահանջվում է վերը նշված փորձաքննության իրականացում, իսկ հակառակը հիմնավորող ապացույցներ Ընկերության կողմից չեն ներկայացվել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ ԼԷ №0654 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2020 թվականի ապրիլի 22-ը, Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած, դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի օգոստոսի 2-ի №5076-02 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 8,046,000 (ութ միլիոն քառասունվեց հազար) դրամ գումարից 4,023,000 (չորս միլիոն քսաներեք հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 8,046,000 (ութ միլիոն քառասունվեց հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի ապրիլի 8-ը գործողության ժամկետով:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.
   1) Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԼԷ №0654 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված՝ Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած, դրական փորձագիտական եզրակացություններով նախագիծը՝ ներկայացման ժամկետը համարվել է 2-րդ անգամ երկարաձգված՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 22-ը.
   2) Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ անգամ երկարաձգված ժամկետում Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական

եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում ԼԷ №0654 լիցենզիայի գործողությունը կկասեցվի.

3) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
12 օգոստոսի 2020թ.